

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հարգելի՛ գործընկեր,

**«Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և տեղեկատվական տեխնոլոգիաների» կենտրոնը 2018-2019 ուստարում կազմակերպում է գիտահետազոտական գրագիտության խորհրդատվությունների<sup>1</sup> ակադեմիական խորհրդատուների բաց մրցույթ:**

**Գիտահետազոտական գրագիտության խորհրդատվությունների** անցկացման նպատակով յուրաքանչյուր ֆակուլտետի և առանձին «Ռազմական ամբիոնի» համար կընտրվի մեկ կամ երկու ակադեմիական խորհրդատու(ներ):

**Գիտահետազոտական գրագիտության խորհրդատվությունների ակադեմիական խորհրդատուի** նկատմամբ ներկայացվող պարտադիր և լրացուցիչ պահանջներն են՝

- ա) պետք է ունենա բուհում առնվազն երեք տարվա դասավանդման փորձ կամ վերջին երեք տարվա ընթացքում առնվազն հինգ թրեյնինգի վարման փորձ,
- բ) պետք է ունենա վերջին երկու տարում հրատարակված առնվազն երեք հոդված՝ վերաբերող գործունեության ոլորտին,
- գ) պետք է պատրաստի գիտահետազոտական գրագիտության խորհրդատվությունների բովանդակության պատրաստման և վարման մեթոդների վերաբերյալ գրավոր նյութ՝ կրթական ծրագրերի և կուրսերի հաշվառմամբ (Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամը գնահատում է հինգ բալային համակարգով, որտեղ մեկը ամենացածր, իսկ հինգը՝ ամենաբարձր միավորն է):
- դ) վերջին երեք տարում ցանկալի է ունենա մասնագիտական և/կամ ընդհանուր զարգացմանն ուղղված ակադեմիական վերապատրաստումներին մասնակցություն (Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամը գնահատում է երկու միավորով՝ անկախ վերապատրաստումների քանակից):

---

<sup>1</sup> Բովանդակային կառուցվածքին կարող էք ծանոթանալ՝ այցելելով [shsu.am](http://shsu.am) --> Կենտրոններ --> Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն --> «ՇՊՀ» հիմնադրամում ակադեմիական խորհրդատվությունների կառավարման աշխատակարգ --> Հավելված 2:

**Մրցույթին մասնակցելու համար գիտահետազոտական գրագիտության խորհրդատվությունների ակադեմիական խորհրդատուից պահանջվում են հետևյալ փաստաթղթերը՝**

- ա) դիմում՝ Համալսարանի ռեկտորի անունով, անձնագրի և սոցիալական քարտի պատճեններ,
- բ) ինքնակենսագրություն՝ 3x4 չափի լուսանկարով,
- գ) տեղեկանք, որում արտացոլված կլինի հավակնորդի վերջին 3 տարվա աշխատանքային գործունեությունը,
- դ) հաստատված գիտական և մեթոդական աշխատանքների ցուցակ,
- ե) վերջին 2 տարում հրատարակված հոդվածների պատճեններ,
- զ) գիտահետազոտական գրագիտության խորհրդատվությունների բովանդակության պատրաստման և վարման մեթոդների վերաբերյալ գրավոր նյութը (1 էջի սահմաններում),
- է) մասնագիտական և/կամ ընդհանուր զարգացմանն ուղղված ակադեմիական վերապատրաստում(ներ)ի վկայական(ներ)ի պատճեն(ներ) (առկայության դեպքում),
- ը) թրեյների կարգավիճակը հավաստող փաստաթղթ(եր)ի պատճեն(ներ)ը (առկայության դեպքում):

**Պահանջվող փաստաթղթերը ներկայացնել կենտրոնի տնօրեն Թ. Խաչատրյանին կամ խորհրդատվությունների համակարգող Շ. Գասպարյանին մինչև սույն թվականի հոկտեմբերի 29-ը ներառյալ:**

**Մրցույթն անցկացվելու է «Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և տեղեկատվական տեխնոլոգիաների» կենտրոնում սույն թվականի հոկտեմբերի 31-ին՝ ժամը 10<sup>00</sup>:**

**Թերեզա Խաչատրյան**

**Բջջ. հեռ.՝ +374 93 248 119**

**Էլ. փոստի հասցե՝ Tereza\_Khachatryan@shsu.am**

**Շուշան Գասպարյան**

**Բջջ. հեռ.՝ +374 94 496 510**

**Էլ. փոստի հասցե՝ shushan\_gasparyan@shsu.am**